

## Մկրտիչ Դանիելյան

### 1903 թ. ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ ԲՈՒՆԱԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԸ, ՆՐԱ ԱՌԱՋԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**Կաթողիկոս, եկեղեցի, կոնդակ, կալվածք, գույք, բռնագրավում, օրենք,  
կառավարություն, քաղաքականություն, սեփականություն**

Արևելյան Հայաստանը գրավելուց հետո ցարական Ռուսաստանը հայ ժողովրդի նկատմամբ վարել է ազգային գաղութային քաղաքականություն՝ ամենատարբեր դրսևորումներով: Այդ քաղաքականության բարձրակետը, թեևս, Հայոց եկեղեցու կալվածքների և գույքի բռնագրավման մասին 1903 թ. հունիսի 12-ի օրենքն էր:

Վիկտոր Բերարն այդ օրենքը բնորոշել է որպես «միջազգային կողոպուտ», որով հետևաբար Հայոց եկեղեցու ունեցվածքը համազգային սեփականություն էր և գոյացել էր ոչ միայն արևելահայերի, այլև Թուրքիայի, Պարսկաստանի, Եվրոպայի և Ամերիկայի հայերի նվիրատվություններով և կտակներով:

Օրենքի նպատակն էր եկեղեցու կողմից ֆինանսավորվող հայկական կրթական, մշակութային օջախները զրկել նյութական օժանդակությունից, որոնք կփակվեին և կարագացվեին հայ ժողովրդի ռուսականացումը:

Ահա մի հատված օրենքից.

«1. Հայ-լուսավորչական եկեղեցիներին, վանքերին, հոգևոր հաստատություններին և այլ հոգևոր-ուսումնական հաստատություններին պատկանող բոլոր անշարժ գույքերը, ստորև (յոդված 2 և նրա ծանօթագրութիւն) հաստատուած հանունները հաշուի առնելով, առանձին հաստատած կանոնների համաձայն որոշված կարգով՝ այդ դավանության հոգևորականության և հոգևոր հաստատությունների վարչությունից վերցնել և հանձնել Երկրագործության և Պետական կալվածքների մինիստրի տեսչությանը՝ պահպանելով Հայ-լուսավորչական եկեղեցու սեփականութեան իրավունքը սոյն դրամագլուխներին և գոյքին:

2. Երկրագործության և պետական կալվածքների մինիստրի տեսչությանը պետք է հանձնվեն հայ լուսավորչական եկեղեցու հետևյալ կալվածքները. թե՛ բնակություն ունեցող և թե՛ անբնակ հողերը, ինչ անուն էլ ունենան և ինչ տեսակի էլ լինեն դրանք, նույնպես առանձին անտառները, մարգագետինները, արոտատեղիները, ձկնորսության տեղերը, ջրաղացները և այլն<sup>1</sup>:

Հիշյալ կալվածքներից ստացվող եկամուտների հսկողությունը և դրամագլուխների կառավարումը կենտրոնացնել Ներքին գործերի մինիստրության մեջ, Օտար

<sup>1</sup> Տես Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 94, ց 9, գ. 58, թ. 3-4:

դավանությունների հոգևոր գործերի դեպարտամենտում, որին Երկրագործության և պետական կալվածների մինիստրը այդ կալվածների կառավարման հաշվետվության մեջ միասին պետք է հանձնի նրանցից ստացվող եկամուտները...

Ծանոթ. Սոյն կանոնները չեն վերաբերում Ս. Պետերբուրգ և Մոսկուա քաղաքների հայոց եկեղեցուն պատկանող անշարժ գույքերին ու դրամագլուխներին<sup>1</sup>»:

1903 թ. հունիսի 12-ի օրենքով, փաստորեն, էականորեն փոփոխվում էին եկեղեցի-պետություն հարաբերությունները, որոնք ձևավորվել էին 1836 թ. մարտի 11-ի եկեղեցական կանոնադրությամբ: 1836 թ. եկեղեցական կանոնադրությամբ ռուսական կառավարությունը ճանաչել է հայոց եկեղեցու սեփականության իրավունքը և վարչական իրավասությունը:

Յոդված 117 – «Յուրաքանչյուր շարժական կամ անշարժ գույք, որ պատկանում է լուսավորչական հայոց մենաստանի կամ եկեղեցու և նրանց պատկանող այլ շինություններ համարվում է հայ-լուսավորչական եկեղեցու ընդհանուր գույք»:

Յոդված 99 – «Վանահայրերը պահպանում են մենաստանների շարժական և անշարժ գույքը և պատասխանատու են եկամուտների կանոնավոր կիրառությանը»<sup>2</sup>:

Իսկ 1903 թ. հունիսի 12-ի օրենքով ինչպես եկեղեցապատկան գույքը, այնպես էլ դրամագլուխները և հետագայում դրանցից ստացվող եկամուտները կենտրոնացվում էին Ներքին գործերի, Երկրագործության և պետական կալվածքների մինիստրությունների և Օտար դավանությունների հոգևոր գործերի դեպարտամենտների ձեռքում /հոդված 1, մաս 4/:

Միաժամանակ պետք է նկատել, որ հունիսի 12-ի օրենքի և նրա կիրառության կարգի մեջ կան ակնհայտ անհամապատասխանություններ: Եթե օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ կալվածքների և դրամագլուխների տնօրինման իրավունքը թողնվում է հայ-լուսավորչական եկեղեցուն, ապա Ներքին գործերի մինիստր Պլեյելի հաստատած կանոնների 6-րդ կետի 5-րդ մասը սահմանում է. «...Դրամագլուխներից պետք է ընդունվեն բոլոր տոկոսաբեր թղթերը, անշարժ կայքերի գրավաթղթերը և պարտաթղթերը, իսկ եկեղեցական առձեռն դրամից բոլոր 100-յակները մինչև 1000 ռուբլիներ»<sup>3</sup>:

Թերևս այս օրինակը բավարար է, որ հասկանանք օրենքի հափշտակիչ էությունը: Մի դեպքում կառավարությունը բռնագրավում է եկեղեցական կալվածներն ու դրամագլուխը, մյուս դեպքում՝ շարունակում վերջինիս համարել հիշյալ գույքի և դրամագլխի սեփականատեր, որը ակնհայտ խաբեություն է:

Կառավարությունը, բնականաբար, փորձեց պաշտոնական և ոչ պաշտոնական ճանապարհներով արդարացնել օրենքի կիրառության անհրաժեշտությունը և անխուսափելիությունը: «Պետերբուրսկի վեդոմոստի», «Կավկազ» լրագրերում կառավարությունը ձգտում է համոզել հայոց համայնքներին, թե կալվածքները գրավելով կառավարությունը նպատակ ունի.

<sup>1</sup> Նոյն տեղում, ֆ. 94, ց 9, գ. 58, թ. 2-3:

<sup>2</sup> Տե՛ս է. Ակնունի «Դեպի կռիւ», ժճՆ 1904, էջ 20-21:

<sup>3</sup> Տե՛ս ՅԱԱ, ֆ. 94, ց. 9, գ. 58, թ. 1-4:

ա) ավելի մեծացնել լուսավորչական եկեղեցու եկամուտները և հետևաբար նպաստել նրա բարգավաճմանը,

բ) նյութապես ապահովել աղքատ հոգևորականներին, որոնց վիճակն այժմ շատ ողբալի է,

գ) ազատել եկեղեցին և կալվածքները ապօրինի հափշտակություններից:

«       » լրագիրը պարզաբանում է նաև, որ իբր կալվածների կառավարման նրբությունները հասու չեն հոգևորականությանը և դա նրանց հարիր չէ, ովքեր պետք է ավելի բարձր բարոյական կարգի պարտականություններ կատարեն: Չկարողանալով ղեկավարել՝ եկեղեցին հրավիրում է զանազան կիսաաշխարհական ժողովուրդ կամ կալվածքները կառավարելու համար առանձին կառավարիչներ: Սա ցույց է տալիս հոգևորականության անձեռնհասությունը՝ վարելու իր տնտեսական գործերը: Շարունակելով մեկնաբանություններն օրենքի շուրջ՝ լրագրում նշվում է, որ օրենքով չեն խախտվում հայ եկեղեցու իրավունքները: Նա առաջվա նման մնում է իր բոլոր անշարժ գույքերի, կալվածքների և դրամագլուխների սեփականատեր: Մեջբերվում է Բեսարաբիայի օրինակը որպես հաջողված նախադեպ: Ըստ «       »-ի սա կհանգեցնի հայ եկեղեցու բարեկեցությանը: Հակադրության մեջ են դրվում հոգևորականության շերտերը. «...եթե այժմ կղերի անդամներից ոմանք, որոնք իրենց իրավասության տակ ունեն եկամուտ բերող կալվածքներ, բավականաչափ ապահովված են, նույն ժամանակ մյուսները, մանավանդ շատերը գյուղական հոգևորականությունից, նյութական մեծ մեղություն են կրում»<sup>1</sup>: Այդ իսկ պատճառով նախատեսվում է առանձին օժանդակ դրամագլուխ ստեղծել եկեղեցական կալվածքների եկամտից 5% հետ զցելու միջոցով, որը հնարավորություն կտա կառավարությանը բավարար հասույթով ապահովել ոչ միայն բարձր, այլև ստորին, ծխական հոգևորականությանը»<sup>2</sup>:

Ցարական իշխանությունները թիֆլիսում տարածել էին հետևյալ հայտարարությունը.

«Վերջին ժամանակներում թիֆլիսի գուբեռնիայի գործիչների, բնակիչների մեջ շատ սուտ լուրեր են տարածում չարամիտ մարդիկ: Խռովություն զցելու համար, էդ մարդիկ աշխատում են հավատացնել ժողովրդին, թե կառավարությունը իբրև թե ուզում է զրկել հայոց եկեղեցին և վանքերը նրա բոլոր կալվածքներից և այդ կայքերը վերցնել իր օգտին, թե կառավարությունը իբրև թե մտածում է փրկել բոլոր հայ եկեղեցիները և վանքերը, և թե վերջապես կառավարությունը իբրև թե կամենում է բոլոր հայերին դարձնել ռուսի հավատը: Այս բոլոր լուրերը ամենևին սուտ են և տարածում են չարամիտ մարդիկ միայն նրա համար, որ նախ խռովություն և անկարգություն զցեն ռաշպար խալխի մեջ և նրան ցավ ու պատուհաս հասցնեն, և երկրորդ, որ պետական կառավարման ժամանակ ստորադիր կառավարիչները չեն կարող առանց հսկողության օգուտ քաղել այդ կայքերից: Ամբողջ Ռուսաց Թագավորության մեջ, ուր որ կան կաթուղիներ, լուծերականներ և մահմեդականներ, ո՛չ կաթուղիների,

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ», 1903թ. հուլիս, N 163:

<sup>2</sup> Նույն տեղում, 1903թ. N 164:

ո՛չ լուծերականների, ո՛չ մահմեդականների հոգևորականությունը չէ կառավարում իր տաճարների կալվածքները առանց տերութեան կողմից հսկողութեան. բայց և էնպես ոչով չէ խանգարում կաթոլիկներին, լուծերականներին, մահմեդականներին ունենալ իրանց տաճարները, շինել և զարդարել նրանց և մնալ իր հավատի մեջ իրանց եկեղեցույ կանոնով ու ծեսով: Հայ մարդկանցից որ մեկին հայտնի չէ, թե ինչ տեսակ կռիվ ու դալմադալ է պատահել հայոց եկեղեցիների կառավարութեան պատճառով: Ես կռիւ ու դալմադալ էլ չեմ լինելու, երբ պետական ձեռքում կը լինի հայոց եկեղեցիների կալուածքների կառավարութիւնը: Չարամիտ մարդիկ սուտ են ասում, իբրև թէ տերութիւնը ուզում է ամենևին խլել հայոց եկեղեցիներից ու վանքերից սրանց կալուածքները: Տէրութիւնը միայն պետք է կառավարէ հայոց եկեղեցիների կալուածքները եւ սրանցից ստացած բոլոր արդիւնքը գործ կը դրուի հենց իրանց եկեղեցիների օգտի համար և Պետական ձեռքի մեջ այդ կալուածքները ավելի անւտանգ կը մնան, քան հիմա են: Ամենքին լաւ յայտնի է, թէ ոչով երբևէ ոչինչ չէ կորցրել, երբ համձնել են իրանց խնայած փողերը պետական գանձարաններում պահելու համար»<sup>1</sup>:

Առաջին հայացքից թվում է, թե հիշյալ քայլերը իրոք կնպաստեին հայ եկեղեցու բարեկարգմանը և հոգևորականության բարեկեցության բարձրացմանը՝ նրանց ազատելով ավելորդ տնտեսական հոգսերից: Իրականությունը մի փոքր այլ է: Հիշյալ քայլերով, նախ, հայ ժողովուրդը կօտարվեր սեփական եկեղեցուց, քանզի մինչ այդ ուներ որոշակի մասնակցություն եկեղեցու տնտեսական գործերին, երկրորդը՝ հոգևորականությունը կվերածվեր կառավարության կողմից ռոճիկ ստացող սովորական ծառայողների, երրորդ՝ ինչ վերաբերում է ստորին հոգևորականության բարեկեցության բարձրացման ձգտմանը, կառավարությունը սրանով փորձում էր սեպ խրել հոգևորականության տարբեր շերտերի միջև իրագործելով դեռևս հռոմեական ժամանակներից եկող «բաժանի՛ր, որ տիրես» մեծապետական քաղաքականությունը:

Հետաքրքիր է իմանալ, թե, այնուամենայնիվ, ի՞նչ էր խլելու հայոց եկեղեցուց ցարական կառավարությունը: Հայ եկեղեցու ընդհանուր ունեցվածքի արժեքը կազմում էր մոտ 100 մլն. ռուբլի, որից տարեկան ստացվում էր մոտ 300 հազար ռուբլու եկամուտ: Եկամուտների մի մասը հատկացվում էր ծխական-եկեղեցական և թեմական դպրոցների պահպանմանը<sup>2</sup>:

Չխորանալով վիճակագրական տվյալների մանրամասն շարադրանքի մեջ, որի անհրաժեշտությունը թերևս չկա, մեջբերենք հանրագումարային տվյալները:

Մխիթար վարդապետի «Հայերը Ռուսաստանում» տեղեկագրի համաձայն Ռուսաստանի 6 հայկական թեմերում 1900 թ. տվյալներով կար 1327 եկեղեցի, 79 վանք, 7 եպիսկոպոս, 34 վարդապետ, 1547 քահանա, 360 եկեղեցական սպասավոր: 1902 թ., հայոց եկեղեցու գույքի և կալվածների բռնագրավման մախորդ տարում, ամբողջ Ռուսաստանում հայոց եկեղեցին ուներ մոտ 175 հազար դեսյատին հող և մոտ 2 մլն. դրամազուլխ<sup>3</sup>:

<sup>1</sup> Ֆ. 94, ց. 9, գ. 58, ք. 71:

<sup>2</sup> Տես է. Ակունցի, նշվ. աշխ. էջ 20:

<sup>3</sup> Տես Մխիթար Վարդապետ «Հայերը Ռուսաստանում», Վաղարշապատ 1906, էջ 20, 36-37:

Հայ եկեղեցու սեփականությունը գոյացել էր դարերի ընթացքում: Այն չէր ծառայում բացառապես հոգևորականությանը, այլև ազգային բյուջեի մի մասն էր, ուստի և թանկ էր ժողովրդի համար:

Շարունակելով մեզ հետաքրքրող հիմնահարցի շուրջ պարզաբանումները՝ փորձենք տալ գլխավոր հարցերից մեկի պատասխանը. ի՞նչ արձագանքներ ունեցավ 1903 թ. հունիսի 12-ի օրենքը հայ իրականության մեջ:

1903 թ. հունիսի 12-ի ցարական օրենքը դիմադրությամբ ընդունվեց . եկեղեցին օրինականության զենքով էր կռվում, իսկ ժողովուրդը՝ հեղափոխական պայքարով: Դիմադրող ուժերից ամեն մեկը դրսևորում էի իր ինքնությունը: Կաթողիկոսի գրաված դիրքը պայմանավորված էր որոշակի հանգամանքներով: Էջմիածնի միաբանությունը, Սինոդի անդամները, թեմական առաջնորդները, արտասահմանում գործող հայ եկեղեցիների ղեկավարները կաթողիկոսին ուղղած հատուկ որոշումներով, նամակներով և հանրագրերով այն տեսակետն էին պաշտպանում, թե նոր օրենքն անարդարացի է, այն ոտնահարում է հայ եկեղեցու անկախությունն ու իրավունքները և խորհուրդ էին տալիս խրիմյանին չընկճվել, չընդունել նոր օրենքը, այլ դիմումներով ու բացատրություններով ջանալ իսպառ վերացնել այն:

Մյուս կողմից՝ խրիմյան կաթողիկոսի համար ոգևորիչ և գոտեպնդիչ եղավ հայ ժողովրդի միահանուռ դիմադրությունն ընդդեմ օրենքի կիրառման, որի կարևորությունը ինքը՝ կաթողիկոսը շեշտում էր պաշտոնական հաղորդագրությունների ժամանակ: Բերենք թերևս մեկ փաստ: 1903 թ. օգոստոսի 6-ին Ներքին գործերի մինիստր Պլեվեին հղած հեռագրում կարդում ենք. «...Ի նկատի առնելով խնդրի շատ լուրջ մշանակությունը ամբողջ հայ եկեղեցու համար և վերին աստիճանի անցանկալի հետևանքները, որ նա կարող է ունենալ, դա պարզ երևում է, իմիջիայլոց, այն իրողությունից, որ Ալեքսանդրապոլում հուլիսի 29-ին և այստեղ՝ Էջմիածնում, օգոստոսի 3-ին ժողովրդի բոլոր խավերից կազմված ահագին ամբոխը՝ անձնապես այլև շատ համայնքներից գրավոր խնդրագրերով՝ ամեն օր դիմում են ինձ խնդրելով Նորին Մեծության ոտաց արկանել ամբողջ ժողովրդի աղերսանքներն այս մասին»<sup>1</sup>:

1903 թ. օգոստոսի 4-ին խրիմյան կաթողիկոսը N 958 կոմիսիայով հրահանգեց Սինոդին ժամանակավորապես հետաձգել բարձրագույն հրամանի հրատարակումը և թողնել իրեն՝ դիմել խնդիրքով Նորին Մեծություն թագավոր-կայսեր, առաջ բերելով այն նկատումներն ու հանգամանքները, որոնք կապված են այս հարցի հետ<sup>2</sup>: Այնուհետև 1903 թ. օգոստոսի 21-ին կոմիսիա ուղարկեց բոլոր թեմերը՝ ունեցվածքը քաղաքացիական իշխանություններին չհանձնելու կարգադրությամբ<sup>3</sup>:

Կաթողիկոսի գրաված կոշտ դիրքը, բնականաբար, առաջացրեց իշխանությունների համապատասխան արձագանքը: 1903 թ. օգոստոսի 5-ին Պլեվեի՝ կաթողիկոսին ուղղած հեռագրում կարդում ենք. «Տեղեկանալով, որ եկեղեցական կալվածքների հունիսի 12-ի Բարձրագույն հրամանի գործադրությունը հանդիպում է հապաղումների, խնդրում են Ձերդ Սրբություն՝ հոգալ և անհապաղ կարգադրություն անել այս

<sup>1</sup> Տես «Դրօշակ» 1903, N7:

<sup>2</sup> Նույն տեղում, ֆ. 56, ց. 16, գ. 349, թ. 11:

<sup>3</sup> Տես «Դրօշակ» 1903, N7:

մասին: Ամեն մի հետաձգում, իբրև անհնազանդություն թագավորական կամքին, առաջ կբերի ծանր հետևանքեր»<sup>1</sup>:

Կաթողիկոսը իր գրաված դիրքը պարզաբանում էր նաև այն արդարացի հարցադրումով, որ օրենքը ընդունվել է առանց իր հետ բանակցելու, ինչը եղել է իր նախորդների օրոք, և ինքը, որպես Հայոց Հայրապետ, այս և բազում այլ հանգամանքները կցանկանար քննել Նորին Կայսերական Մեծության հետ: Կաթուղիկոսն, անշուշտ, հույս ուներ, որ հանդիպումը կայսեր հետ կլիներ արդյունավետ: Նրա կարծիքով օրենքի ընդունման գլխավոր մեղավորները տեղական իշխանություններն էին:

Իհարկե, այստեղ կա ռացիոնալ հատիկ, քանզի չենք կարող մոռանալ Գուլիցինի գրաված հայատյաց դիրքը, բայց միևնույն ժամանակ պետք էր ընկնել մյուս ծայրահեղության մեջ՝ սրբացնելով կենտրոնական իշխանություններին, որոնք իրենց մեղքի բաժինն ունեին այս հարցում:

Ներքին գործերի նախարար Պլեվեին և անձամբ ցարին ուղղած հեռագրերում կաթողիկոսը անձնական տեսակցություն էր հայցում կայսրից, իր խոսքերով ասած. «...ամենաողորմածաբար թույլատրել ինձ անձամբ Ձերդ Մեծության ոտաց արկանել ամբողջ հայ հոգևոր հոտի աղերսը և Ձեզ ներկայացնել իմ կարևոր բացատրություններն ու նկատումները՝ մինիստրական կոմիտեի որոշումը կանգնեցնելու մասին...»<sup>2</sup>:

Օգոստոսի 13-ին Պլեվեի պատասխան հեռագրում կարդում ենք. «...Թագավոր կայսրը բարեհաճեց հրավիրել Ձեր ուշադրությունը Ձերդ սրբության անկանոն ընթացքի վրա՝ ներկա տարվա հունիսի 12-ի մինիստրական կոմիտեի վճիռը գործադրելու վերաբերմամբ: Օգոստոսի 4-ի Ձեր կոնդակը մի առաջարկություն է Սինոդին շեղվել Բարձրագույն կամքի անհապաղ իրագործումից, այսինքն կատարել հավատարիմ հպատակության անենածանր պարտազանցություն»: Ապա շեշտվում էր, որ սա հայ հոգևորականության առաջին շեղումը չէ, և հարցականի տակ է դրվում նախկինում (1836թ) ընդունված կանոնադրության գոյությունը, ինչպես նաև անժամանակ էր համարվում կաթողիկոսի անձամբ ներկայանալը<sup>3</sup>:

Եթե Պլեվեին և ցարին հղած հեռագրերում տեսնում ենք կաթողիկոսի խոսքի ենթադրական և աղերսական բնույթը, ապա իշխան Նակաշիժեի, որպես Երևանի նահանգի եկեղեցիների և վանքերի կալվածքները և դրամագլուխները ընդունող հանձնաժողովի նախագահի հետ փոխանակած հեռագրերում երևում է նրա խոսքում անհողողող կամք և հաստատականություն. «...Մնալով հանդերձ հավատարիմ հպատակ իմ թագավոր կայսեր, ես յայտնում եմ, որ երբեք չեմ կրնար իբրև Հայոց Հայրապետ, համաձայն լինել ներկայ նոր օրենսդրութեան. այո, և չեմ ընդունիլ զայն երբեք, չեմ համաձայներ, քանի որ միանգամայն կը յեղաշրջէ ինձ հաւատացած եկեղեցւոյ դարաւոր իրավունքները և վարչական կարգերը»<sup>4</sup>:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 12, գ. 87, ք. 110, ձեռագիր, բնագիր:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 87, ք. 113, ձեռագիր, բնագիր:  
Նույնը ֆ. 56, ց. 16, գ. 349, ք. 11, ձեռագիր, բնագիր:

<sup>3</sup> Տես Ռևոլուցիոն կոչեր և թռուցիկներ, Երևան 1960, էջ 661:  
Նույնը կա «Դրօշակ»-ի 1903, N7-ում:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 333, ք. 81-83:

Նակաշիձեին հղած հաջորդ հեռագրում Խրիմյանը հույս հայտնելով, որ ցարը կվերցնի դառնության այն բաժակը, որ կախված է երեք միլիոն հայ ժողովրդի գլխին, հայտնում է, որ չի կարող մասնակից լինել հանձնաժողովի գործերին: Շարունակելով իր միտքը՝ նշում է, որ հրամայել է իր ներկայացուցիչներին, թեմական առաջնորդներին, սինոդականներին, որոնք ուխտել են չմասնակցել այդ խնդրին, որը վերջացած չի համարում: Կաթուխկոսն իրավամբ նշում է, որ ինքը չէ այդ հազարամյա սեփականության սեփականատերը, այլ հայ ժողովուրդը և այն գոյացել է այդ ժողովրդի բարեպաշտական և կրոնասիրական զգացումների արդյունքում<sup>1</sup>:

Կաթողիկոսի և ամբողջ հայ եկեղեցու գրաված դիրքը ինքնին արդեն հասկանալի էր:

Այժմ փորձենք պարզել, թե ինչ դիրք էին գրավել հայ հասարակությունը և ազգային կուսակցությունները: Հայ ժողովրդի բոլոր հատվածները՝ գյուղացի, արհեստավոր, բանվոր, առևտրական, մտավորական և բուրժուա, դժգոհությամբ ընդունեցին 1903 թ. հունիսի 12-ի օրենքը: Շարժումը տարերային էր: Ժողովրդի բնագրին ու քաղաքական հոտառությանն է թողնված ամեն որոշում ու ձեռնարկ: Առաջին ազդանշանը տվեց Ալեքսանդրապոլը: Այստեղ 1903 թ. հուլիսի 29-ին 5000-ամոց ժողովուրդը եկեղեցական զանգահարությամբ հավաքվեց առաջնորդարանում, ուր իջևանել էր Խրիմյան կաթողիկոսը, այդտեղից ուղեկցեց նրան երկաթուղու կայարան և աղմկալից ցույցերով պահանջեց մերժել կառավարության պահանջը և չհանձնել եկեղեցական գույքերը: Նմանատիպ ելույթներ տեղի ունեցան գրեթե բոլոր հայաբնակ վայրերում՝ Երևանում, Կարսում, Էջմիածնում, Ախալքալաքում, Գանձակում, Թիֆլիսում, Բաթումում, Շուշիում, Նոր Նախիջևանում և այլուր<sup>2</sup>:

Հետագայում տարերային շարժմանը ուղղություն տալու նպատակով ստեղծվեց «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե», որը կուսակցական բնույթ չէր կրում: Կոմիտեի մեջ հետագայում մեծ դեր ստանձնեց ՀՅԴ-ն: Շարժմանը հարեցին «Հնչակյան», «Սոցիալ-դեմոկրատ» կուսակցությունները:

ՀՅԴ-ն, որ մինչ այդ խուսափում էր կովկասյան ճակատում Ռուսաստանին որպես թշնամական պետություն դիտարկելուց, բայց այժմ որևէ տարբերություն չէր դնում Թուրքիայի և Ռուսաստանի միջև. «...Հայ ժողովուրդը իր գլխավոր և երկրորդական մասերում այսօր արդեն տեսնում է որքան նման են Համիդ և Նիկոլայ, քուրդ և կազակ, մեկը՝ գազանությունը և արյունարբությունը զենք ընտրած, մյուսը՝ մարդատյացությունը և ցինիկությունը»<sup>3</sup>:

Միաժամանակ ՀՅԴ-ն հանդես էր գալիս զոհողության և համերաշխության կոչերով՝ հայ ժողովրդին խորհուրդ տալով, որ կռվի մեջ միայն պիտի գտնի իր իրավունքը:

Հայ ազգային կուսակցությունները, բացի ժողովրդական ելույթներին ընթացք տալուց, որդեգրեցին նաև ահաբեկման ճանապարհով իշխանություններին եկեղեցու կալվածների և դրամագլուխների բռնագրավման գործունեությունից հետ պահելու

<sup>1</sup> Տես Է. Ակնունի, նշվ. աշխ. էջ 36-37:

<sup>2</sup> Տես Դավիթ Անանուն, նշվ. աշխ. հատոր 3, էջ 39:

<sup>3</sup> Տես «Դրօշակ» 1903, N 7:

քաղաքականությունը: 1903 թ. հոկտեմբերի 14-ին Թիֆլիսում հնչակյան 3 ահաբեկիչ դաշույններով ծանր վիրավորեցին կառավարչապետ իշխան Գոլիցինին<sup>1</sup>: Սա առաջին մահափորձն էր: Յետագայում մահափորձի կամ մահվան ենթարկվեցին Բաքվի նահանգապետ Նակաշիձեն, Գանձակի փոխնահանգապետ Անդրեևը, գավառապետներ՝ Բոգոսլավսկին, Շմերլինգը, Պավլովը, ոստիկանապետ Սախարովը, պրիստավներ Նասչանսկին, Ջավախովը և այլոք<sup>2</sup>:

1903 թ. հունիսի 12-ի օրենքի դեմ հանդես եկավ նաև հայ իրականության մեջ նոր ծիլեր արձակած սոցիալ-դեմոկրատիան: ՌՍԴԲԿ կովկասյան միութենական կոմիտեն բազմաթիվ կոչերով ու թռուցիկներով դատապարտեց հիշյալ օրենքը. «Հունիսի 12-ի օրենքով ցարը հայերից խլում է իրենց եկեղեցական կալվածները կառավարելու իրավունքը: Մինչև այժմ հայ ժողովուրդը ինքն էր կառավարում այդ կալվածները իր ընտրած երեցփոխների և հոգևորականների միջոցով: Այժմ նա զրկվում է այդ իրավունքից...»<sup>3</sup>: Միաժամանակ սոցիալ-դեմոկրատները անմապատկահարմար էին համարում ահաբեկման ճանապարհը. «...Ոչ թե գոլիցիններն են ստեղծում ինքնակալությունը, այլ ընդհակառակը, այս վերջինն է մշակում իր համար համապատասխան մարդիկ: Այդ իսկ պատճառով գոլիցինները և նրա նմանները կանհայտանան և ինչպես ծուխ կցրվեն միմիայն ինքնակալության անկմամբ...»<sup>4</sup>:

1903 թ. հունիսի 12-ի օրենքի դեմ հանդես եկավ հայտնի սոցիալ-դեմոկրատ Բոգդան Կնունյանցը՝ 1903 թ. հոկտեմբերի 1-ին «            » թերթում տպագրված իր «Նոր թալան» կամ «Նոր կողոպուտ» հոդվածով:

Կնունյանցը բավականաչափ իրատեսորեն է գնահատում իրավիճակը. «Սխալ կլիներ բնութագրել, թե միայն այդ օրենքն ընդունակ էր այդպիսի փոթորիկ առաջացնել: Մշակութային խաղաղ հիմնարկների սխտեմատիկ հետապնդումները, տիրաառչակ ռուսականացման քաղաքականությունը, 300-ից ավելի հայկական դպրոցների փակումը և մի ամբողջ շարք նման այլ միջոցառումներ հայ բնակչության և կառավարության միջև կամաց-կամաց ստեղծում էին խիստ հակամարտություն, որը վաղ թե ուշ պետք է պայթեր...»<sup>5</sup>:

Այսպիսով, վստահաբար կարող ենք ասել, որ եթե 1903 թ. հունիսի 12-ի օրենքով ցարական կառավարությունը նպատակ էր դրել ջլատել հայ եկեղեցու և ժողովրդի ուժերը, անջրպետ ստեղծել եկեղեցի-ժողովուրդ հարաբերություններում, ապա ստացվեց հակառակ արդյունք. հայ ժողովուրդը համախմբվեց իր եկեղեցու շուրջը՝ քաջ գիտակցելով, որ պաշտպանելով եկեղեցու իրավունքները՝ դրանով նաև պաշտպանում է իր իրավունքները: Կովկասահայի հետ միաժամանակ իր բողոքի ձայնը բարձրացրեց արևմտահայը, պարսկահայը և համայն հայությունը, որն անշուշտ նպաստեց ազգային միասնությանը և ազգային գիտակցության բարձրացմանը:

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ», 1903թ. հուլիս, N 226:

<sup>2</sup> Տե՛ս «Դրօշակ» 1905, N 7:

<sup>3</sup> Տե՛ս Ռևոլուցիոն կոչեր և թռուցիկներ, Երևան 1960, էջ 33, 40-43, 62-64:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 40-43:

<sup>5</sup> Բ. Կնունյանց, մշվ. աշխ., Երևան 1978, էջ 75:



## Գրականության ցանկ

1. Է. Ակնունի «Դեպի կռիւ», Ժնև 1904 :
2. Մխիթար Վարդապետ, Չայերը Ռուսաստանում, Վաղարշապատ, 1906:
3. Ռևուլուցիոն կոչեր և թուղիկներ, (1902-1921), Երևան 1960:
4. Դավիթ Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատոր 3:
5. Բ. Կնունյանց, Ընտիր երկեր, Երևան 1978:
6. V. Berard, L' Empire Russe et le Tsarizme, Paris, 1905:

**Սկրտիչ Դանիելյան, 1903 թ. հունիսի 12-ի Չայոց եկեղեցու գույքի և կալվածքների բռնագրավման մասին օրենքը, նրա առաջին արձագանքները հայ իրականության մեջ** – 20-րդ դարասկզբին հայ ժողովրդի դեմ ցարական կառավարությունը վարում էր գաղութային և ձուլման քաղաքականություն: Այդ քաղաքականությունն առաջին հերթին արտացոլվեց 1903 թ. հունիսի 12-ի օրենքով: Չայ ժողովրդին ձուլելու այդ քաղաքականությանը առաջին հերթին խանգարում էր Չայոց եկեղեցին, որը մեծ ազդեցություն ուներ ինչպես արևելահայերի, այնպես էլ աշխարհասփյուռ հայության վրա: Նա ուներ հարյուրավոր ուսումնական և մշակութային հաստատություններ, որոնք պահպանվում էին Էջմիածնի միջոցներով:

Ֆրանսիացի պատմաբան Վիկտոր Բերարդն այդ օրենքն անվանեց «միջազգային կողոպուտ», իսկ Բոգդան Կնունյանցը՝ «նոր թալան»:

**Мкртыч Даниелян, Закон от 12-ого июня 1903 года о захвате имущества армянской церкви, его первые отклики в армянской действительности –** 20-

12- 1903 .

« \_\_\_\_\_ », \_\_\_\_\_ –

« \_\_\_\_\_ ».

**Mkrtych Danielyan, The law of confiscating the properties and estates of the Armenian Church in 1903, its first responses** – At the beginning of the 20<sup>th</sup> century the tsarist government was leadingng a colonising and assimilating policy. That was expressed by the law of June 12<sup>th</sup>, 1903. The plan of assimilation of the Armenian nation was first of all being hindered by the Armenian church, which had a great influence on both East Armenians and the world-spread Armenians. It had hundreds of educational and cultural institutions, which were kept by the aid of Edjmiatsin. The French historian Victor Berard characterized that law as «international loss» and Bogdan Knunyants as «new robbery».

*Սկրտիչ Դանիելյան – ԵՊՉ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի հայցորդ*

